ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N5

N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան << 18 >>. << 02 >>. 2025թ.

ՀՀ ՆԳ նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղ Ա.Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Էյչ Գրուպ ՍՊԸ** -ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 03.07.2024թ.-ին կնքված **ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.14 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ** ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված **590 400 000** (հինգ հարյուր իննսուն միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամից **ևս 49 500 000 /քառասունինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը՝** ներառյալ ԱԱՀ, որի վճարումը Պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի մնացած մասի վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո,լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի/պայմանագրի/ պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում: Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.5 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՆԳՆ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՆԳՆ	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2500010488760100
Հ/Հ 900011042471	ՀՎՀՀ 01254973
ՀՎՀՀ 02882913	Հեռ. 091 40 40 73
հեռ. 010 596039	Էլ. հասցեն՝ eychgroup@gmail.com,
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	khv_84@mail.ru
_____ Ա.Ֆիդանյան	_____ Կ. Հարությունյան
/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/	/տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
<< 18 >> 02. 2025թ.
ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՔԲ-ՕԿԿ ծածկագրով
գնման պայմանագրի թիվ 5 համաձայնագրի

Վճարման ժամանակացույց

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծառայությունը դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												ՀՀ դրամ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	*72261100/5*	*Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ*		49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000	49 500 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՆԳՆ
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 596039
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա.Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973
Հեռ. 091 40 40 73
Էլ. Հասցեն՝ eychgroup@gmail.com,
khv_84@mail.ru

_____ Հ. Հայրապետյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ